800. ԾԱՐԱ ՎԱՆՔԻ *գեղաքանդակ խաչքարի վրա.*

Աստուծով ես Սայտի, որդի պարոն Շանշին, քաջ և յաղթող զաւրավարին և մեծ իշխանաց յազգէն, ի թուին: ՊՀԹ: (1430), տեղեացս տէր և պարոն Փոքր Սիւնեաց, Ականայ. Հաւթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվաքայ, կանգնեցաք զխաչս հաւր մերոյ Շանշին. որք երկրպագէք յաղաւթս յիշեցէք:

Հրատ. Շահխաթունեանց, II, 365։ Բարխուդարեանց, 408։

80. ՉԱՓՆԻ ԿԱՄ ՋԱՆԿԻ ԳՅՈՒՂ

Նախկինում հայաբնակ այս մեծ գյուղատեղում այժմ գրեթե ոչինչ չի մնացել. Ջալալյանցն ու Տեր-Մովսիսյանը հիշատակել են հետևյալ հուշարձանները.

Ա. Ս. Կարապետ, *եկեղեցի, կոփածո քարերով շինված.*

Բ. Մատուռ-դամբարաններ, *երեք հատ, եկեղեցու մոտ, որոնց մեջ եղել են անարձանագիր տապանաքարեր.*

Գ. Մատուռ-դամբարան, *որին որպես երկրորդ հարկ ծառայել է չորս միակտուր քարե սյուների վրա կառուցված կաթողիկեն (հավանաբար զանգակատուն է եղել). Ներքին հարկում եղել է մեծ տապանաքար, ըստ Ջալալյանցի՝* Աշոտոյ:

Դ. Այլ մատուռ, *հասարակ շենք.*

Ե. Տների մնացորդ *կամարակապ մասեր.*

801. ԽԱՉՔԱՐԻ *թիկունքին, որը կանգնած է եղել կրկնահարկ մատուռի գմբեթի տակ, 5 տող.*

Թուին :ՉԻԴ: (1275) կամաւն Ա̄յ.| ես Սուքման և Ուքնա| կանգնեցաք զխաչս հաւր| մերոյ Աւշաւ.տայ| և մաւր. յաղաւթս ⌞յիշեցէք⌟:

Ծանոթ. *Առնում ենք Տէր-Մովսիսյանից, Ջալալյանցը ունի տարբերություններ, մանավանդ թվականը նշանակել է :ՉԽԴ:* Ուքնա *հավանական է՝* Ուքան:

Հրատ. Ջալալեանց, II, 215։ Տէր-Մովսիսեան, 93բ. և «Ազգ. հանդ.» XXV, էջ 76։

802. ԿՐԿՆԱՀԱՐԿ *մատուռ դամբարանի պատին.*

Յուսովն Աստուծոյ ես Հասան և Ջողբէգ և Ինանկ խաթուն զինչ Արթուրայ որդւոցն կայր ծախեցաք Հասանայ հողով և մարզով սուրբ Կարապետին. ետուն ամենայն եկեղեցիք Հասանայ. կատարիչք աւրհնին յաստուծոյ:

Հրատ. Ջալալեանց, II, 215։

81. ԼԵՎՈՆԱԲԵՐԴ—ԼՈՀԱԲԵՐԴ

Սոդքի լեռնանցքով դեպի Թարթառ գետի հովիտը տանող ճանապարհն անցնում է Լև գետի ափերով։ Իստի Բուլաղ և Զափնի գյուղերի արանքում մի բարձր լեռան գագաթին գտնվում է այս փոքր բերդը, որի մեջ եղել են մատուռի ավերակները, իսկ բակում մի խաչքար, որի արձանագրությունն արտագրել և Տէր-Մովսիսյանին է ուղարկել լեռնային ինժեներ Աղաբաբյանը։

803. ԽԱՉՔԱՐԻ *թևերի տակ և հյուսիսային կողին 17 տող.*

Թվ. :ՈԽԵ: (1196). ես Կ . . . |րազ| Լս . . . | ⌈կա⌉|նգն|⌈եց⌉ի| զխաչ˪ս˪| բարե|-խաւսու|թեն որ|դո իմ|ո Խոստ|րով|իկա| որ վախչ|անեցաւ| ի մէջ ա|յլազ⌈գեաց⌉ |որք կ⌈ար⌉դայ⌈ք . . . .

Ծանոթ. *Սկզբի և վերջի տողերի վերջավորությունները ջարդված են։*

Հրատ. Տէր-Մովսիսեան, 93։